բուած, որոնք խմբրեալ էին ունիթորաց սուրբ Վարդապետութիւնները։ Միով բանիւ՝ բաց ի Եղեկիէլի մեկնութենէ ու քարոզներէ, միւս գրուածները դրեթէ բոլորն ալ ազգային եկեղեցւոյն պաշտպանութիւնը համար են, և բոլոր իւր ձիգը թափած է ընդդէմ եկեղեցւոյ հակառակողաց, լատին վարդապետաց։ Իւր գրիչը ոչ միայն օրինակ է գեղեցիկ ոճոյ, այլ և բարեպաշտ սրտի և ազգասէր ոգւոյ, որուն համար ամենայն եկեղեցականք և երեւելի աշխարհականք ազգիս պարտին նախանձաւոր և հետեւող ըլլալ։

Ա. Գ. ԱՑԻՆ

Յառանգաւորաց դպրոցին համար անցեալ օր Եւդոկիայէն պատանի մի խրկուած էր Գ. Երապատիւ Առաջնորդին յատուկ յանձնագրովը, որ կ'իմացընէր յիշեալ պատանւոյն՝ Յուցակին պայմանացը համեմատ ընտրուած ըլլալը։ Այսու ամենայնիւ Ամենապատիւ Սրբազան Պատրիարքը երկու օրէն յետոյ խրկեց զպատանին սուրբ Թադէոս յարգոյ բժիշկ պարոն Ա. Տէպէճեանին որ քննէ զինքը ըստ օրինի արուեստին։ Հրամանը գործադրուելով՝ յետագայ վկայագրով կը հաստատէ Պ. բժիշկը տըղուն առողջութեան գոհացուցիչ վիճակը։

Թիւ — 7.

Ամենապատիւ Սրբազան Հայր։

Ըստ հրամանի Ձեր բարձր Սրբազնութեան և ըստ կանոնի Սուրբ Թադէոս, Եւդոկիացի Կարապետ անուն Յառանգաւորաց դպրոցի նորեկ աշակերտին այցելութիւն ընելով, իւր կազմուածքին բնական նիհարութենէն, և ձախ ազդրին վերայ անցեալս պարարտ մը ի զատ, թէ ժառանգական և թէ ստացական ախտ մը՝ նաև եւս ամենեւին բնական պակասութիւն մը չունենալուն վկայելով կ'ստորագրեմ.

Գ. Ա-եպիս. Ս. Տէպէճեան։

66 Յունվար 8

Ի Վան Ս. Յովհաննէս։

— Սուրբ Թադէոս Յառանգաւորաց և նախկին դպրոցի աշակերտաց տարեկան քննութիւնը ըստ սովորութեան՝ Սրբոց Վարդանանց տօնին նախընթաց շաբթուն ըլլալով, այս տարի երկու շաբաթ յառաջ սկսուեցաւ, այսինքն յունուարի 18 ին, և որովհետեւ դեռ լրացած չէ, վասն որոյ թէ քննութեանց արդիւնքը և թէ Սրբոց Վարդանանց աւուր ըլլալիք դպրոցական հանդէսը եկող ամսուն կը հրատարակենք։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Անցեալ ամսոյ 5 ին, Մեքսիկայի Կայսեր լիազօր Դեսպան զօրապետ Վսեմափայլ Լէոնարոս Մարգէզը, մեկնեցաւ ի Կոստանդինուպոլիս։ Յիշեալ դեսպանը մեկնելէն քանի մի օր առաջ փառաւոր խնջոյք մի տուաւ քաղաքիս Հիւպատոսներուն, ուր հրաւիրեալ էր յատկապէս և Վսեմ. Կառավարիչ Իզզեթ փաշայն։

— Սուրբ Քաղաքիս՝ Ամերիկայի միացեալ Նահանգաց Հիւպատոսը վեց ամսէն ի վեր է հրաժարած ու մեկնած ըլլալով, անոր յաջորդն յունուար ամսոյ 6 ին հասաւ, որ է Վ. Լիք-

digitised by A.R.A.R.@

տոր Պենգուլեր [1]։ Յիշեալ հիւպատոսը զինուորական կարգէ ըլլալով, պատերազմի մէջ իւր մէկ սրունքը կորսնցուցած է։

ԱՅԼԵՒ ԱՅԼԲ

Իտալիոյ մէջ նոր աղանդ մը։

Բրիստոնէութիւնը ուր որ աւելի ծաղկած ու ազատ է, հոն կը տեսնենք որ մոլորութիւններն ու նորանոր աղանդներն ալ անպակաս են միշտ։ Այսպէս է Ամերիկան և Եւրոպան, զորոնք կրնանք աղանդոց խանձարուրք համարել։ Այսուն որոյ և միամիտ բարեպաշտներու և կրօնամոլ անձանց երկիւղն այն ատոր ճանի է, որ եթէ մէկը յանկարծ եւ նէ և իւր ի աղայութենէ ունեցած մէկ համոզմանը դէմ հակառակ վարդապետութիւն մի յայտնելու ըլլայ, անմիջապէս իրր նոր աղանդաւոր կը նշանակի. զոր օրինակ եթէ ջերմ Հռոմէական մի, յանկարծ ելլէ Ս. Պապին աշխարհական իշխանութիւնը մերժելու ըլլայ, աղանդաւոր է պիտի ըսուի, և կամ բողքական մի եւ նէ բաց ի Ս. Գիրքերէն՝ եկեղեցոյ աւանդութիւններէն մէկ քանին կամ բոլորն ալ ընդունելու ըլլայ, իւր կրօնակցին առջեւ նոր աղանդի մէջ ինկած պիտի համարուի։

Օտարս լրագրի մի մէջ կարդացինք որ, Իտալիոյ Ենգոնա ու Ֆիորենցա քաղաքներուն մէջ աղատամիտ անձինքներէ ժողովմի կազմուեր ու նոր աղանդ մի հաստատուեր է. և իրենց մոլար վարդապետութեան կէտերն սա երեք բաներն են եղեր, Ա. Պատարագը իտալերէն լեզուով ընել. Բ. Հաղորդութիւնը երկու տեսակի ներքեւ մատակարարել, այսինքն հացին ու գինին մէկտեղ հաղորդեցնել հաւատացելոց. Գ. Քահանայները իրարմէ ձեռնադրուիլ։ Որոտ մեղ՝ առաջինը անվնաս է, երկրորդը հարկաւոր, երրորդը տարակուսելի։ Այսուն զի եթէ զիրար ձեռնադրողք երկուքն ալ աշխարհական են, չկրնար ըլլալ ձեռնադրութիւն. իսկ եթէ մէկը արդէն քահանայ և աշխարհականը ձեռնադրելու ըլլայ, ալ իրեն հարկ չմնար փոխադարձ ձեռնադրութիւն անկէ ընդունել. ուստի այս երրորդ կէտը կրնայ սխալ տեղեկութիւն ըլլալ։ Իսկ առաջինը մոլորութիւն չհամարուիր, ապա թէ ոչ՝ բաց ի մէկ սրբազան լեզուէ մի աշխարհիս ուրիշ զանազան լեզուով եղած պատարագները ընդունելի եղած չպիտի ըլլան, որովհետեւ աղանդ համարուած են տարբեր լեզուով պատարագելը։ Որքան առ երրորդը, զոր աղանդի տեղ դրած են, ընդհակառակը աղանդաւորութենէ ու մոլորութենէ յուղղափառութիւն դարձած պէտք է համարուի. որովհետեւ բուն իսկ աղանդ մի հակառակ Քրիստոսի կացուցմանը մէկ տեսակով և եթ հաղորդելն է։ Այլապէս է ահա Եւրոպիոյ կոյր բարեպաշտ քրիստոնէից ըրած գահավէժ դատումները և սխալ կարծիքները, որով ճշմարտութիւն մի մոլորութեան տեղ կը դնեն։

Խաբողին՝ կէս խաբող մը ալ ա-ելլ։
կամ
Սիկարայի ապահովութիւնը։

Ապահովութեան համար հաստատուած ընկերութեանց մէջ առաջին

---

1 Mr. Victor Banbucher.

digitised by A.R.A.R.@